

Հայ Դպրոցի Եւ Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանի 90 Ամեակին Նուիրուած Սեմինար

Սուրբիոյ Հայ Աւետ. Կրթական Խորհուրդի եւ կազմակերպութեամբ՝ Հայ Աւետ. Բեթէլ Երկրո. Վարժարանի Հայագիտական Ամպիոնի տեղի ունեցաւ հայ դպրոցի եւ Հ.Ա.Բ.Ե. Վարժարանի 90 ամեակի նուիրուած սեմինար մը, Ուրբաթ 7 Փետրուար 2014ին, ժամը 1:00-ին վարժարանիս Փօլատեան սրահէն ներս: Սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին 7-8-9-10-11րդ կարգի աշակերտութիւնը, Տնօրէնութիւնը եւ ուսուցչակազմը: Օրուան հանդիսավարուիին էր՝ Տիկ. Թիթառ Չօրպաճեան-Պալիօզեան: Սոյն միջոցառումի ընթացքին Տիկ. Լուսին Ապաճեան-Չիլաբոշեան ներկայացուց պատմական ակնարկով հայ դպրոցի պատմութեան զարգացման գործընթացը: Նիւթի մատուցման ընթացքին սահիկի ցուցադրութեամբ աշակերտները ծանօթացան հայ մշակոյթի զարգացման մէջ կարեւոր դեր կատարած դպրոցներուն՝ սկսեալ Մ.Մաշտոցի հիմնած առաջին դպրոցէն մինչեւ մեր օրերը: Առ այդ, յաջորդ հանգրուանով աշակերտները եւ ուսուցչակազմը խմբային զրոյցով քննարկեցին՝ դպրոցի առաքելութիւնը ընդհանրապէս, իսկ հայկական դպրոցը՝ մասնաւորապէս: Ապա, Հայ Աւետ Բեթէլ Երկրորդական Վարժարանի հիմնադրման 90 տարիներու պատմութիւնը մատուցեց տիկ. Ազնիւ Ստեփանեան-Արապաճեան: Աւարտին, Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան իր սրտի խօսքը ուղղեց աշակերտներուն ըսելով. «Մեր գործունէութիւններուն ընդմէջէն պէտք է միշտ կարեւորել հայ

լեզուն եւ մշակոյթը: Սուրիացի արաբ ազնիւ ժողովուրդին հետ թէւ միաձուլելու ենք մեր յոյզերն ու յոյսերը, սակայն ոչ ի խնդիր մեր մայրենիին նկատմամբ: Մենք, որպէս անհատներ, ապրելով սփիւռքի տարբեր ցամաքամասերու վրայ պէտք է կարելորենք հայապահպանումը: Հայապահպանման գաղափարը ոչ միայն մեր գրիչներու հարուածին տակ լոզունք դարձնել է, այլ միտք եւ փիլիսոփայութիւն է, որ պէտք է մեր էութենական խառնուածքին մաս կազմէ»:

